«ՀԱՅՈՑ ԻՇԽԱՆ»-Ը ԱՐԱԲԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Ա. Ն. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

Բյուզանդիայի և Սասանյան Իրանի միջև 591 թ. կնքված դաշնագրից հետո, երբ Մեծ Հայքի խոշոր հատվածն ընկավ հույների ձեռքը[1], *Հայաստանն այլևս օտար կառավարիչներ չունեցավ։*

Արաբական առաջին արշավանքների ժամանակ, երբ Սասանյան Իրանը ջախջախվեց, պարսկական Հայաստանը ինքնաբերաբար միացվեց բյուզանդական հատվածին և Թեոդորոս Ռշտունին (հուն. Τουρούστης ὁ Ὀρουστουνής*)*[2], *որը փաստորեն Հայաստանի իշխանն էր արաբական առաջին արշավանքի ժամանակ (640 թ.), արդեն իշխում էր ամբողջ Հայաստանում։ Այս հարձակումից անմիջապես հետո կայսրը նրան շնորհեց պատրիկ տիտղոսը*[3]*։ Ղևոնդը 642—43 թթ. արաբական երկրորդ հարձակման մասին խոսելիս Թեոդորոս Ռշտունուն կոչում է իշխան Հայոց*[4]*։*

Սեբեոսի պատմության մեջ հիշվում է, որ Կոստանդին կայսրը Համազասպ Մամիկոնյանին (հուն. Ὁ Ἀμαζάσπης ὁ κουροπαλάτος*)*[5] *նշանակեց «Կիւրապաղատ և ետ նմա գահոյս արծաթիս և զիշխանութիւնն աշխարհին Հայոց»*[6]*։ Սա իր իշխանությունն ստացել էր 654 թ., Թեոդորոս Ռշտունու գերի տարվելուց հետո։ Առաջին Հայոց իշխանը, որն ուղղակի արաբների կողմից էր նշանակված, Գրիգոր (*Γρηγόριος*) Մամիկոնյանն էր (661 թ.)։ Այդ մասին Ղևոնդը հետևյալն է գրում. «և տայր (իմա՝ Մուավիա—Ա. Տ.-Ղ.) Գրիգորի զպատիւ իշխանութեանս Հայոց և առաքէ գնսա բազում մեծարանօք յաշխարհն Հայոց»*[7]*, և ապա ստորև նրա մասին խոսելիս նրան կոչում է «Գրիգոր իշխանն Հայոց»*[8]*։ Արուճի եկեղեցում (արևելյան պատին), որի կառուցողը Գրիգոր Մամիկոնյանն էր, կա հետևյալ արձանագրությունը. «...հիմնարկեցաւ սուրբ կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի Հայոց իշխանի և Հեղինէի նորին զուգակրցի...»*[9]*։*

---

1 *«Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն», ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, գլ. Ժ, էջ 47։*

2 La Narratio de Rebus Armeniae, edition critique et commentaire par G. Garitte. Louvain, 1952, *էջ 405։*

3 *Սեբեոս, 110։*

4 *«Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս.-Պետերբուրգ, 1887, էջ 15։*

5 Narratio, *էջ 405։*

6 *Սեբեոս, էջ 155։ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց. 1853, էջ 51։*

7 *Ղևոնդ, էջ 14։*

8 *Նույն տեղում, էջ 15։*

9 *«Բանասէր», ամսաթերթ գրական և գիտական, Փարիզ, 1903, էջ 27։ Տ. Հովսեփյան, Քարտեզ հայ վիմագրութեան, Վաղարշապատ, 1913, տախտակ Ջ։*

Գրիգոր Մամիկոնյանն[10] իշխեց քսան[11] տարուց ավելի և սպանվեց խազարների դեմ պատերազմի մեջ, որն ըստ որոշ աղբյուրների տեղի ունեցավ ՃԼԴ[12] այսինքն 685 թվականին։ Նրա հաջորդների մասին որոշ շփոթություն կա մեր միջնադարյան պատմիչների մոտ, որոնք մեծ մասամբ Գրիգոր Մամիկոնյանի հաջորդն են համարում Ներսեհ Շիրակյանին, ապա Աշոտ Բագրատունուն և վերջապես Ներսեհ Կամսարականին, որին հաջորդեց Սմբատ Բագրատունին։ Այս շփոթությունն առաջացել է Ներսեհ Կամսարականի մասին Ասողիկի տված տեղեկության անորոշ լինելու պատճառով։ Ասողիկի հիշած Շիրակի տեր Ներսեհը և Կամսարական Ներսեհը[13] նույն անձնավորությունն են. բայց որովհետև նրա մասին իր տեղեկությունը Ասողիկը երկու մասի է բաժանել, ավելի ուշ շրջանի պատմիչները, և առաջին հերթին Սամվել Անեցին[14], կարծել են, թե խոսքը երկու տարբեր անձնավորությունների մասին է։ Որոշ ուսումնասիրողներ նույնիսկ կարծել են, թե Աշոտն ու Ներսեհը երկուական անգամ են վարել Հայոց իշխանի պաշտոնը[15]։

Գրիգոր Մամիկոնյանին հաջորդել է Աշոտ Բագրատունին ([Ἀ]σώτης Πατρίκιος)[16]։ Սրա իշխանության տարիներին Հայաստանը չէր ենթարկվում ոչ Օմայան խալիֆայությանը, ոչ էլ Բյուզանդիային։ Եվ պատահական չէ, որ թե մեկը, թե մյուսը արշավանքներ ձեռնարկեցին դեպի Հայաստան։ Աշոտ Բագրատունին ընկավ արաբների դեմ մղված կռվում[17]։ Աշոտ Բագրատունու իշխանության գլուխ անցնելու տարին, ըստ Ղևոնդի ակնարկի, համընկնում է Հուստինիանոս Բ-ի գահակալության թվականին[18] (685 թ.)։ Ղևոնդը վկայում է նաև, որ արաբների արշավանքը և Աշոտի մահը տեղի են ունեցել նրա իշխանության չորրորդ տարում, հետևաբար նա մահացել է 689 թ.։ Այդ միևնույն տարում Հուստինիանոսը արշավեց Հայաստան և Շիրակի տեր Ներսեհ Կամսարականին (Ὁ Νερσέχης Καμψαρακάν)[19] նշանակեց Հայոց իշխան։ Ասողիկի վկայությամբ Ներսեհը տիրեց «ամս Դ»[20], ուստի նրա իշխանությունը պետք է վերջացած լինի 693 թ.։ Նրան հաջորդեց Սմբատ Բագրատունին, որի օրոք արաբները վերջնականացես նվաճեցին Հայաստանը։

Նվաճելով Հայաստանը, արաբները հաստատեցին կառավարման մի սիստեմ, որը մեր պատմագրության մեջ ինչպես հարկն է չի պարզաբանված։ Մ. Չամչյանից սկսած մինչև անցյալ դարի վերջերը հայագիտության մեջ տի-

[10] Narratio, էջ 405։

[11] «Մովսես Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1860, էջ 156։

[12] «Անանուն ժամանակագրութիւն», Վենետիկ, 1904, էջ 80։

[13] Ասողիկ, էջ 100։ VII դարի երկրորդ կեսի «Հայոց իշխան»-ների մասին տես Բ. Առաքելյան, Ժամանակագրական դիտողություններ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1941, 1, էջ 61—71։

[14] «Սամուելի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 84։

[15] «Հայոց անձնանունների բառարան», Դ, 33։ Լ և ո, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, Երևան, 1947, էջ 331—333։

[16] Narratio, էջ 405։

[17] Ղևոնդ, էջ 18։

[18] Նույն տեղում, էջ 17։

[19] Narratio, էջ 405։

[20] Ասողիկ, էջ 101։

րող էր այն կարծիքը, թե խալիֆայության կազմում Հայաստանն ինքնուրույն վարչական միավոր էր իր առանձին կառավարիչներով՝ ոստիկաններով[21]։ Սկսած մեր դարի սկզբից[22] մինչև այսօր, ուսումնասիրողների մոտ տիրում է մի այլ կարծիք, ըստ որի Հայաստանը Աղվանքի ու Վրաստանի մի մասի հետ կազմում էր մեկ միավոր՝ Արմինիա։ Նրանք ենթադրում են, որ Արմինիայի երեք բաղկացուցիչ մասերը կորցրել էին իրենց վարչական ինքնուրույնությունը, քանի որ Արմինիայի ոստիկանն ընդհանուր էր Հայաստանի, Աղվանքի և Վիրքի համար[23]։ Այս երկու տեսակետներն էլ թեև որոշ ճշմարտություն են պարունակում, այնուամենայնիվ, միակողմանի են։ Հայաստանի արաբական շրջանի պատմությանը վերաբերող աղբյուրների ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ VII—IX դարերում Հայաստանը չդադարեց վարչական ուրույն միավոր լինելուց և կառավարվում էր հայ կառավարիչների ձեռքով, որոնք կոչվում էին՝ «Իշխան Հայոց»[24]։ Մ. Ղազարյանից հետո պատմաբանների մոտ արաբական Հայաստանի վարչական ինքնուրույնությունն անտեսվում էր, որովհետև կարծում էին, թե հիշյալ դարերում միշտ չէ, որ գոյություն են ունեցել «Հայոց իշխան»-ներ[25]։

Արաբների տիրապետությունը Հայաստանում վերջնականապես հաստատվեց այն ժամանակ, երբ Հայոց իշխանն էր Սմբատ Բագրատունին (Ὁ Πατρικιος Συμπάτιος)[26]։ Անկախ այն բանից, թե այս Սմբատը VII դարում հայտնի Վարազտիրոց Բագրատունու թոռն էր, թե Բագրատունյաց մի ուրիշ ճյուղից էր սերում[27], նրան պետք է համարել հիմնադիրը Բագրատունի մի իշխանական ճյուղի, որը ժառանգաբար իշխեց արաբական տիրապետության ամբողջ շրջանում։ Բյուզանդացի պատմիչ Թեոփանեսը նրան կոչում է Συμπατιος ο πατρίκιος Ἀρμένιας[28] (Սմբատ պատրիկ Հայոց)։ Տեսնելով Բյուզանդիայի անզորությունը, Սմբատը նախընտրեց Օմայան խալիֆայության կողմն անցնել։ Ըստ Հովհաննես Դրասխանակերտցու[29] և այլ աղբյուրների[30], Սմբատ Բագրատունին Սահակ կաթողիկոսի հետ արաբների կողմից գերի տարվեց Դամասկոս, թեև Ղևոնդի մոտ նման տեղեկություն չկա։ Համենայն դեպս, 703 թ. մենք նրան գտնում ենք Հայաստանում, որտեղ նա արաբների դեմ

---

[21] Ոմանք Հայոց իշխաններին և ոստիկաններին միացրել են մեկ ցուցակի մեջ։ Տե՛ս Մ. Ղամշյան, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, Գ, 1786, ժամանակագրութիւն, էջ 106—107, M. J. Saint Martin, Mémoires historiques et géographiques sur l'Armenie, I, Paris, 1818, էջ 416—418։

[22] M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft, էջ 69—70։

[23] Очерки истории СССР, III—IX вв., Москва, 1958, էջ 486։

[24] Հայագիտության մեջ առաջին անգամ Ժ. Լորանն է, որ փորձել է կազմել արաբական շրջանի Հայոց իշխանների ցուցակը. տե՛ս J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, Paris, 1919, էջ 333—336։ Տե՛ս նաև С. Еремян, Раннефеодальные государства Закавказья в сасанидский период, История СССР, ч. III, М.—Л., 1939, էջ 126—127։

[25] «Հայ ժողովրդի պատմություն» (մակետ), Երևան, 1948, էջ 233։

[26] Narratio, էջ 405։

[27] Սմբատ Բագրատունու և ընդհանրապես Բագրատունիների տոհմածառի մասին տե՛ս Մ. Մարկվարտ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, Վիեննա, 1913։ Ն. Ադոնց, Բագրատունեաց փառքը, Պատմական ուսումնասիրութիւններ, Փարիզ, 1948։ Ն. Ակինյան, Հայ Բագրատունիներու տոհմածառը, Մատենագրական հետազոտութիւններ, Գ, Վիեննա, 1930։

[28] Theophanis Chronographia, Bonnae, MDCCCXXXIX, էջ 561։

[29] Դրասխանակերտցի, էջ 54։

[30] «Յայսմաւուրք», մարտ 31։

ապստամբություն էր պատրաստում, երբ արաբ կառավարիչ Աբդ-Ալլահը ծրագրում էր ոչնչացնել հայոց նախարարներին («բառնալ զազատախումբ տոհմն յաշխարհէս Հայոց հանդերձ նոցին հեծելովք»)։ Սմբատը խորհրդակցեց Աշոտի որդի Սմբատի ու Թեոդորոսի (Ռշտունու) որդի Վարդի հետ, և բոլորը եկան այն եզրակացության, որ հարկավոր է երկրից հեռանալ։ Վարդանակերտի ճակատամարտում (703 թ.) իրեն հետապնդող արաբ զորքին հաղթելուց հետո նա հեռացավ Տայք և ամրացավ Թուխարք ամրոցում[31]։

Վարդանակերտի ճակատամարտից հետո մի քանի տարի Հայաստանն ըստ երևույթին մնաց առանց Հայոց իշխանի։ Դավիթ Դվնեցու վկայաբանության մեջ, որը պատմական որոշ արժեք ներկայացնող աղբյուր կարելի է համարել, հիշվում է, որ Դավիթ Դվնեցու թաղմանը ներկա էր Մուշեղ Մամիկոնյան սպարապետը («Մուշեղ սպարապետն որդի Մամիկոնենի և մարզպետի»)[32]։ Հավանաբար այս «մարզպետ»-ը Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանն էր, որի տոհմանունը, ինչպես տեսանք, Արուճի վերոհիշյալ արձանագրության մեջ «Մամիկոնենի» ձևով է գրված։

Տայքում որոշ ժամանակ մնալուց հետո Սմբատ Բագրատունին, որը կայսրից կյուրապաղատ տիտղոսն էր ստացել, բյուզանդական զորքի աջակցությամբ մտավ Հայաստանի Վանանդ գավառ։ Սակայն Իրաշպետ գյուղի մոտ պարտություն կրելով, հեռացավ և իրեն ընկերացող նախարարների հետ հաստատվեց Եգերաց աշխարհի Փույթ (Փոթի) քաղաքում, որը կայսրը նրանց էր պարգևել։

Նախճավանի և Խրամի արյունալի դեպքերից հետո նոր խալիֆա Վալիդը (հայ. Վլիթ) սկսեց հայ նախարարների և եկեղեցու նկատմամբ մերձեցման քաղաքականություն վարել և ահա Աբդ ալ-Ազիզ իբն Հատիմ ալ-Բահիլի ոստիկանը կոչ արեց Փույթում հաստատված վտարանդի հայ նախարարներին դառնալ իրենց գավառները։

Ղևոնդի վկայությամբ հայ նախարարները Փույթում մնացել են վեց տարի[33], ուստի նրանց վերադարձը ընկնում է 712 թ.։ Սակայն եթե նկատի առնենք, որ 6 տարին կարելի է համարել նաև նախարարների փախստական վիճակում մնալու շրջանը, ապա նրանց վերադարձի թվականը կդառնա 709, մանավանդ որ Աբդ ալ-Ազիզի ոստիկանության տարիներն են՝ 706—709[34]։

Թեև Ղևոնդը լռում է Սմբատ Բագրատունու (Ասողիկի մոտ՝ Սմբատ Բիւրատեան Բագրատունի)[35] իշխանության երկրորդ շրջանի մասին, սակայն այլ աղբյուրների մեջ որոշակի վկայություններ կան։ Ասողիկը նշում է, որ Մանազկերտի ժողովը տեղի ունեցավ Սմբատի իշխանության օրոք («յաւուրս Սմբատայ իշխանութեանն»)[36], իսկ ինչպես հայտնի է, այդ ժողովը տեղի է ունեցել 726 թ.[37]։ Հովհան Օձնեցու վարքագրության մեջ հիշվում է, որ այս կաթողիկոսի

---

31 Ղևոնդ, էջ 23—26։

32 «Սոփերք Հայկականք», ԺԹ, էջ 95։

33 Ղևոնդ, էջ 35։

34 Հ. Նալբանդյան, Արաբ ոստիկանները Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1956, № 9, էջ 108։

35 Ասողիկ, էջ 101։

36 Նույն տեղում, էջ 103։

37 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, կ. Պոլիս, 1912, էջ 837։ Ն. Տեր-Մինասյան, Հայոց եկեղեցու յարաբերությունները ասորաց եկեղեցիների հետ, էջմիածին, 1908, էջ 185։

որոք Հայոց իշխանն էր Սմբատ Կուրապաղատը և խալիֆան Օձնեցուն պատվելու համար «հրաման ետ ձեռագրով իւրով և առաքեաց առ կուրապաղատն Հայոց Սմբատ...»[38]։

Պարզ չէ միայն, թե ո՞վ է Աղվանից Պատմության մեջ և Ստեփանոս Օրբելյանի[39] մոտ հիշատակված երկարնակ Սմբատ Բագրատունի ասպետը։ Այնտեղ, Ստեփանոս Սյունեցի վարդապետի մասին խոսելիս, հիշվում է, որ սա հակաճառեց Սմբատ ասպետին («հանդիպի նմա հակաճառել ընդ Սմբատայ ասպետի Հայոց երկարնակի»)[40], որի երեսից էլ նա փախավ Բյուզանդիա։ Գուցե խոսքն այստեղ վերաբերում է Մանազկերտի ժողովում տեղի ունեցած վեճերին[41], քանի որ ժողովում հենց նման հարցեր էին շոշափվում։ Մնում է ենթադրել, որ Բյուզանդիայում գտնվելու տարիներին Սմբատը հարել էր երկարնակ ուսմունքին։

Աղվանից Պատմության մեջ Սմբատի մահվան տարին[42] է «թիւն Հայոց հարիւր եօթանասուն և հինգ»[43] (ՃՀԵ)[44], այսինքն 726 թ.։

Սմբատին հաջորդեց Աշոտ Բագրատունին («իսկ յետ Սմբատայ եկաց իշխան Հայոց Աշոտ Բագրատունի որդի Վասակայ ամս ԺԵ»)[45], որը նշանակվեց Մրվան իբն Մուհամմադի կողմից։ Սմբատ Բագրատունու մահվանից մինչև Աշոտի պաշտոնապես Հայոց իշխան ճանաչվելու թվականն ընկած տարիների ընթացքում Աշոտ Բագրատունին կարող էր իշխած լինել անպաշտոն կերպով, սակայն պաշտոնապես ճանաչվեց միայն 732-ին։ Այդ տարում Արմինիայի, Ատրպատականի և Ջազիրայի ընդհանուր կառավարիչ Մրվան իբն Մուհամմադը եկավ Դվին և Աշոտ Բագրատունուն հանդիսավոր կերպով կարգեց Հայոց իշխան («եւ կոչէ առ ինքն զԱշոտ որդի Վասակայ ի տանէ Բագրատունւոյ և տայր նմա իշխանութիւն պատրկութեան ի վերայ աշխարհիս Հայոց հրամանաւ Հեշմայ և բազում պատուով պատուէր զնա»)[46]։ Այս քայլը բողոքի ալիք առաջացրեց Մամիկոնյանների մոտ, որոնցից Գրիգոր և Դավիթ եղբայրներն անմիջապես ընդվզեցին։ Թեև նրանք ոստիկանի հրամանով ձերբակալվեցին և աքսորվեցին Եմեն (Եման), սակայն հետագայում վերադարձան Հայաստան և ներհակությունը երկու մրցակից նախարարական տների միջև սուր բնույթ ստացավ[47]։

VIII դարի առաջին կեսում Հայոց իշխանի գործակալությունից բացի կար նաև սպարապետությունը, որի մասին Ղևոնդը որոշ տվյալներ է հաղորդում։ Նա վկայում է, որ Հայոց իշխան Աշոտ Բագրատուսին գնաց Դամասկոս

---

38 «Յայսմաւուրք», ապրիլ 17։

39 «Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, էջ 97—98։

40 «Պատմութիւն Աղուանից», էջ 256։

41 Մ ա ռ կ վ ա ր տ, Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը, էջ 25։

42 Ոմանք Սմբատի մահվան տարին դնում են 715 թ., հենվելով լոկ աղբյուրների այն վկայության վրա, թե Սմբատն իշխեց քսան տարի (սկիզբը դնելով 695 թ.), տե՛ս Օ ր մ ա ն յ ա ն, Ազգապատում, Ա, 820։ «Հայոց անձնանունների բառարան», Դ, էջ 542։

43 «Պատմութիւն Աղուանից», էջ 258։

44 Մատենադարան, ձեռ. № 1531 (1289 թ.), էջ 367բ։

45 Ա ս ո ղ ի կ, էջ 104։

46 Ղ և ո ն դ, էջ 112։

47 Ն. Ա դ ո ն ց, Քաղաքական հոսանքները հին Հայաստանում, Պատմական ուսումնասիրություններ, էջ 35—40։

և անձամբ բանակցեց Հիշամ (հայ. Հեշմ) խալիֆայի հետ հայոց այրուձիի ոռճիկի ուշացման կապակցությամբ։ Նա գրում է. «զի յերից ամաց և անդր արգելեալ էր զնախարարացն Հայոց և նոցին հեծելոցն զխածիթայսն»[48]։ Այստեղ «երեք ամաց և անդր» (երեք տարի և ավելի) արտահայտության մեջ «անդր» բառը, ըստ երևույթին, որոշակի իմաստ չի պարունակում, քանի որ քիչ ստորև պատմիչն ավելացնում է, որ Հիշամը Աշոտին տվեց երեք տարվա ուշացած ոռճիկը տարեկան հարյուր հազար արծաթի հաշվով։ Արդ, եթե դոյություն ունի այրուձի, որը խալիֆայությունից պաշտոնապես ոռճիկ (խածիթայ) էր ստանում, ապա պետք է լիներ նաև սպարապետը։

Օմայանների անկման նախօրեին, երբ Մրվան իբն Մուհամմադը կռվում էր իր հակառակորդների դեմ, Հայոց զորքը Աշոտ Բագրատունու հրամանատարությամբ փութաց Միջագետք նրան օգնելու։ Այդ ժամանակ Հայաստանում ապստամբություն ծագեց և շարժման ղեկավար Գրիգոր Մամիկոնյանը Արմինիայի ոստիկանի կողմից իշխան նշանակվեց Աշոտի փոխարեն («կացոյց որդին Մսլիմի ի վերայ զօրացն Հայոց իշխան զԳրիգոր ի տանէն Մամիկոնեան փոխանակ Աշոտոյ»[49]։ Սակայն խալիֆան չճանաչեց Մամիկոնյան իշխանի նշանակումը և վերահաստատեց Աշոտ Բագրատունուն։ Պայքարը վերջացավ նրանով, որ Մամիկոնյանները կուրացրին Աշոտին, իսկ ինքը Գրիգորը՝ շուտով վախճանվեց Կարնո քաղաքում 748 թ.[50]։ Այս դեպքերը կատարվում էին այն ժամանակ, երբ Հայաստանն ապստամբել էր և Հայոց իշխան դարձավ Մուշեղ Մամիկոնյանը, հավանաբար հենց հայ նախարարների ընտրությամբ։ Ղևոնդը անորոշ ձևով գրում է, որ «կացուցին իշխան զեղբայր նորին (իմա՝ Գրիգորի—Ա. Տ.-Ղ.) զՄուշեղ սակաւ ինչ ժամանակս»[51]։

Ըստ երևույթին, վերջինիս իշխանությունը Աբբասյանների կողմից չճանաչվեց։ Եզիդ ալ-Սուլամի ոստիկանի օրոք Հայոց իշխան նշանակվեց Աշոտի հորեղբորորդի Սահակը (Իսահակ)[52], իսկ սպարապետ դարձավ Աշոտի որդի Սմբատը[53]։ Այդ ժամանակ դեռևս կենդանի էր Աշոտ Բագրատունին, որը, ըստ Ղևոնդի, մահացավ կուրացումից տասներեք տարի հետո[54], այսինքն՝ 761 թ.։ Պարտավի 768 թ. եկեղեցական ժողովին ներկա էր «բարեպաշտ իշխանն աշխարհին մերոյ Սահակ Բագրատունի»[55] ընկերակցությամբ Սմբատ սպարապետի, Ատրներսեհ Սյունու, Մերուժան Արծրունու և այլոց։

Ասողիկի վկայությամբ Սմբատ Բագրատունին պաշտոնավարել է 22 տարի[56] և քանի որ նա սպանվել է 775 թ. Բագրևանդի ճակատամարտում, ուստի պետք է սպարապետ նշանակված լիներ 753 թ.։ Ակներևորեն նույն տարում էլ Հայոց իշխան էր նշանակվել Սահակ Բագրատունին, մանավանդ որ Եզիդ իբն Ուսայդի առաջին պաշտոնավարության տարիներն էին 752—754 թթ.[57]։

48 Ղևոնդ, էջ 113։
49 Նույն տեղում, էջ 120։
50 Նույն տեղում, էջ 124։
51 Նույն տեղում։
52 Նույն տեղում, էջ 128։
53 Ասողիկ, էջ 105։
54 Ղևոնդ, էջ 124։
55 «Կանոնագիրք հայոց», հրատ. Ա. Ղլտճյան, Թիֆլիս, 1913, էջ 166։
56 Հ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 653, Ասողիկ, էջ 105։
57 Հ. Նալբանդյան, Արաբ ոստիկանները Հայաստանում, էջ 111։

Բագրևանդի ճակատամարտում զոհվածների շարքում Սմբատ սպարապետի հետ հիշվում է «Սահակ բարձակից և նիզակակից նորին»[58], որին, սակայն, դժվար է նույնացնել Հայոց իշխան Սահակի հետ, քանի որ, ըստ որոշ աղբյուրների[59], նա սպանված էր 770 թ.։ Ասողիկը Հայոց իշխանների շարքում (ըստ իշխանաց կարգի) Սահակի փոխարեն հիշում է Սմբատ Բագրատունուն[60], որը Մուշեղ Մամիկոնյանի (موشانيل الارمنى[61] հայազգի Մուշայիլ) հետ ղեկավարեց 774—775 թթ. մեծ ապստամբությունը։ Հավանական է, որ Սահակի սպանությունից հետո նա է ստանձնել Հայոց իշխանի պարտականությունները։

Սամվել Անեցին հիշում է[62], որ ՁԿԴ (764) թվականին Հայոց իշխան նշանակվեց Աշոտ Բագրատունին և մնաց 17 տարի, այսինքն մինչև 781 թ.։ Սա հավանաբար Սահակ իշխանի որդի Աշոտն էր։ Սամվել Անեցու մոտ Աշոտի պաշտոնավարության սկզբնավորության տարին անհավանական է, սակայն նրա վերջին տարին՝ 781 թ., կարող է ճիշտ լինել, քանի որ հենց այդ ժամանակ էր, որ Տաճատ Անձևացին Հայոց իշխան դարձավ։ Եթե իրոք հիշյալ Աշոտը[63] եղել է Հայոց իշխան, ապա նա կարող էր պաշտոնավարած լինել 775-ից մինչև 781 թթ.։

Արմինիայի կառավարիչ Օսմանի օրոք (781—785) Հայոց իշխան նշանակվեց Տաճատ Անձևացին (հուն. Τατζατης[64], արաբ. طازاد الارمنى البطريق)[65]։ Սա երկար տարիներ բյուզանդացիների հետ կռվել է արաբների դեմ և մեծ հրոչակ վայելել։ Իրենք կայսրուհու հետ գժտվելուց հետո անցավ արաբների կողմը, որոնց հրամանատարն էր գահաժառանգ Հարունը։ Սա 780—786 թթ. մի քանի նահանգների ընդհանուր կառավարիչ էր, որոնց մեջ էր նաև Արմինիան[66] և ի դիմաց արաբական զորքին մատուցած ծառայությունների, Հարունը Տաճատին նշանակեց իշխան Հայոց[67]։ Արմինիայի ոստիկան Օսմանը հակառակվեց, պատճառաբանելով, թե հայ նախարարները դեմ են նրան իբրև խալիֆայության նախկին թշնամու։ Հարունն ստիպեց Օսմանին գործադրել իր հրամանը և Տաճատը դարձավ Հայոց իշխան, իսկ սպարապետ նշանակվեց Բագարատը (Բագրատունի)։ Հայոց իշխանի և Արմինիայի ոստիկանի միջև հակամարտությունն այնքան էր սրվել, որ Օսմանը 785 թ. խազարների դեմ կռվելու պատրվակի տակ հրավիրեց իշխան Տաճատին, սպարապետ Բագարատին և Ներսեհ Կամսարականին Դարբանտի կողմերը և հանձնարարեց Քերան կոչված դաշտում անցկացնել ամբողջ ամառը։ Վատառողջ կլիմայի պատճառով վախճանվեցին Տաճատը, Բագարատը, Ներսեհը և ուրիշներ[68]։

---

58 Ղևոնդ, էջ 150։

59 Մ. Չամչյանը հիշում է, որ ըստ ասորի պատմիչ Դիոնիսիոսի (Տելլ մահրացի) Սահակին սպանել է Մուսի ոստիկանը 770 թ. («Պատմութիւն հայոց», Բ, 413)։

60 Ասողիկ, էջ 105։

61 Liber expugnationis regionum auctore al-Beladsori, ed. M. J. de Goeje, Lugd. Bat., 1886, էջ 210։

62 Սամուել Անեցի, էջ 88։

63 Ն. Ակինյան, Հայ Բագրատունիներու տոհմածառը, Մատենագրական հետազոտութիւններ, Գ, Վիեննա, 1930, էջ 315։

64 Theophanis Chronographia, 698.

65 Annales auctore Abu Djafar at Tabari, Lugd. Bat., 1880, III, 501.

66 Ibn al-Athir, Կահիրե, Զ, 25։

67 Ղևոնդ, էջ 159—160։

68 Նույն տեղում, էջ 160—161։

Հարուն ալ-Ռաշիդի գահակալությունից (786) սկսած միայն վեց տարվա ընթացքում (786—792) իրար հաջորդեցին Արմինիայի հինգ ոստիկաններ, որոնց օրոք երկիրը ավելի ծանր վիճակում էր գտնվում[69]։ Ակներևորեն հենց այս վեց տարիների ընթացքում էր, որ տեղի ունեցավ Սուլայմ ցեղի արաբների զանգվածային գաղթը[70], Վանա լճի արևմտյան և հյուսիսային կողմերը։ Պատմական աղբյուրները հստակ վկայություններ չեն տալիս որոշելու համար, թե ով էր Հայոց իշխանը այս դժվարին տարիներին։ Եվ կարելի է ենթադրել, որ այդ գործակալությունը գուցե թափուր էր մնացել։

Վարդան պատմիչի վկայությամբ Բերկրիում հաստատված Ութմանիկ (Օսմանի) արաբները այնքան էին նեղում Աղիովտի բնակիչ Ռեուններին, որ սրանք դիմեցին Բագրևանդի ճակատամարտում զոհված Սմբատի որդի Աշոտ Բագրատունուն և նրա հովանավորության տակ հեռացան Աղիովտից ու հաստատվեցին Տայքում[71]։ Եթե նկատի ունենանք, որ սա կարող էր տեղի ունենալ արաբների գաղթեցման տարիներին, ապա պետք է ենթադրել, որ 790-ական թթ. սկզբներին Հայաստանում գահերեց իշխանի հեղինակություն էր վայելում հիշյալ Աշոտ Բագրատունին, որ կոչվում էր Մսակեր։ Նա իր եղբոր՝ Շապուհի հետ տիրացավ (ըստ Ասողիկի՝ գնեց)[72] Շիրակ և Աշոցք գավառներին, ինչպես նաև Տարոնին, որոնց տերերը (Մամիկոնյաններն ու Կամսարականները) զոհվել էին Բագրևանդի ճակատամարտում և Դարբանտի մոտ։ Պարզ է, որ այս իրադարձությունները 775—785 թվականներից շատ ուշ չէին կարող տեղի ունեցած լինել։ Վարդանը վկայում է, որ Աշոտը տիրույթներ ուներ նաև Տայքում, վերականգնել էր Կամախը («շինէ զԿամախ և բնակեցուցանէ ի նմա կրնտանիս իւր»)[73]։ Արաբ պատմիչների վկայությունները ցույց են տալիս, որ Կամախը (արաբ. Քամախ) VII—IX դարերում ձեռքից ձեռք էր անցել հույների և արաբների միջև և Հարունի օրոք արաբները այն գրավել էին հիջրի 177 թ. Ռաբի ալ-Ախիր ամսին[74] (793-ի ամառը)։ Եթե ընդունենք, որ Վարդանի մոտ խոսքը վերաբերում է Անի Կամախին, ապա այս ժամանակ է, որ Աշոտը կարող էր այնտեղ կառուցումներ կատարած լինել։ Սակայն այս վայրը կարելի է փնտրել նաև Տայքում, որի Կալմախ կոչված ամրոցում ապաստանել էին Բագրատունիները[75] 774—775 թթ. ապստամբությունից հետո։

Ասողիկը զանց առնելով Ծաճատ Անձևացուն, Աշոտին դնում է նրա հորից՝ Սմբատ սպարապետից անմիջապես հետո (իսկ ըստ իշխանաց կարգին զկնի Սմբատայ որդւոյ Աշոտոյ Աշոտ որդի նորա որ Մսակերն կոչիւր՝ ամս ի)[76]։ Սակայն Սամվել Անեցին[77] նրա իշխանության սկիզբը համարում է 804

---

[69] Ղևոնդ, էջ 162, 166—167։ Ibn Wadhih qui dicitur al jaqubi Historiae, Lugd Bat. 1883, II, 515։

[70] Jaqubi, էջ 515։

[71] «Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ Պատմութիւն Տիեզերականս», ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1861, էջ 106։

[72] Ասողիկ, էջ 106։

[73] Վարդան, էջ 105։

[74] Beladsori, էջ 185։

[75] С. Еремян, Закавказье в период арабского владычества, История СССР, 1939. Հմմտ. նաև Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, II, Երևան, 1934, էջ 196, 198։

[76] Ասողիկ, էջ 106։

[77] Սամուել Անեցի, էջ 91։

թվականը։ Ըստ երևույթին, 790-ական թվականներին Աշոտ Մսակերն իրականում Հայոց իշխան էր, բայց պաշտոնապես ճանաչվեց միայն 804 թ.։

Հայոց իշխան Աշոտը լքեց Կոգովիտում Բագրատունիների վաղեմի տոհմական ամրոց Դարույնքը և իր նստավայրը (Ասողիկի արտահայտությամբ՝ արքունիքը)[78] տեղափոխեց Բագարան։

Աշոտի իշխանության տարիներին (մոտավորապես 811—813) Խառանի եպիսկոպոս Թեոդորոս Աբու Կուրրան (Ապիկուռա) մի թուղթ գրեց հորդորելով նրան հարելու քաղկեդոնական ուսմունքին[79]։ Հայոց իշխանն այդ մասին խորհուրդ հարցրեց Հակոբիկ ասորիների Աբու Ութայթա Տակրիտեցի վարդապետից։ Սրանից մեզ են հասել երկու նամակ, ուղղված Աշոտ իշխանին, որոնցից մեկի մեջ նրան անվանում է «Աբու-լ-Խաբբաս պատրիկն Աշուշա իբն Սինբատ», որը պետք է «Աբու-լ-Աբբաս Աշոթ իբն Սինբաթի» (ابو العباس اشوط بن سنباط) աղավաղումը լիներ[80]։ Միքայել Ասորու մոտ Հայոց իշխանը կոչվում է «Աշոտ պատրիկ»[81]։

Աշոտ Մսակերի մահվանից (826 թ.) հետո նրան հաջորդեցին երկու որդիները՝ Սմբատը որպես սպարապետ, իսկ Բագարատը՝ Հայոց իշխան։ Բաբեկի ապստամբության ընթացքում (817—837 թթ.) Հայաստանն այնքան ինքնավարություն էր ձեռք բերել, որ Հայոց իշխան Բագարատը դարձել էր ինքնիշխան տիրակալ, կրելով իշխանաց իշխան (بطريق البطارقة՝ ազչան շան ազչանշան[83]) տիտղոսը։ Սմբատն ու Բագարատը իրենց միջև բաժանել էին Աշոտ Մսակերի թողած ժառանգությունը։ Սմբատը (اشوط بن سنباط), որը կոչվում էր Ապլարաս[84] (արաբ. ابو العباس, հավանաբար Աբաս անվամբ որդի ունենալու պատճառով) տիրում էր Արշարունիք, Շիրակ, Աշոցք գավառներին և Տայքի ու Սպերի որոշ մասերին, իսկ Բագարատը (بطريق اشوط بن)[85] տիրում էր Տարոնին, Սասունին և Խլաթին։ Արաբ պատմիչ Բալազորին նրան անվանում է «Խլաթի իշխան» (بطريق خلاط)[86] և հիշում է նաև, որ Բագարատը տիրույթներ ուներ Շիմշաթի կողմերում։ Նա փեսայացել էր Արծրունիներին, որոնց իշխանը՝ Աշոտը (اشوط بن حمدون بن حاجن)[87] մեծ հեղինակություն էր վայելում։

Իշխանաց իշխան կոչումը ստանալուց հետո Հայոց իշխանի հեղինակությունը մեծացավ։ Եթե մինչ այդ նա գահերեց իշխան էր համարվում միայն

---

78 Ասողիկ, էջ 106։

79 Վարդան, էջ 107—108։

80 Ն. Ակինյան, Թեոդորոս Ապիկուռա և նրա Ասորի, Մատենագրական հետազոտություններ, Վիեննա, 1922, էջ 122։

L. Maries, Epikura-Aboukara, Revue des Etudes Arméniennes, 1921, t. I, fasc. 4, էջ 110։

81 Michel le Syrien, ed. et trad. par Chabot, III, 33.

82 Tabari, III, 1408։ Հետագայում «իշխանաց իշխան» (բաթրիկ ալ բաթարիկա) էին կոչվում Տարոնի Բագրատունիները։ Օրինակ, X դարում այսպես էր կոչվում Աշոտի որդի Գրիգորը. Recueil des textes relatifs a Sayf al Daulah, Paris, 1934. էջ 76—78։

83 Theophanis continuati, Bonnae, MDCCCXXXVIII, 111, էջ 127։

84 Ասողիկ, էջ 106։ Թարարիի մոտ Աբու-լ-Աբբասից հետո գրված է الوارثى (ալ-վարիսի), որն անհասկանալի է (Tabari, III, 1416)։

85 Beladsori, էջ 211։

86 Նույն տեղում, էջ 185։

87 Նույն տեղում, էջ 212։ Tabari, III, 1410. Jaqubi, II, 598.

Հայաստանի նախարարների նկատմամբ, ապա իշխանաց իշխան դառնալով նրա հեղինակությունը տարածվեց նաև Վրաց ու Աղվանից իշխողների վրա։ Հայ Բագրատունիների նպատակն էր՝ համախմբել ոչ միայն Հայաստանը, այլև ամբողջ Արմինիան։ Թովմա Արծրունին Աշոտ իշխանաց իշխանի[88] մասին գրում է հետևյալը. «Քանզի հաւատացեալ էր վերակացութիւն աշխարհիս Հայոց Աշոտի, որ իշխանաց իշխան՝ ձեռն ի գործ արկեալ նուաճել զիշխանս Հայոց զՎրաց և զԱղուանից, որ եղև իսկ»[89]։ Բագարատը գերի տարվեց Սամառա 851 թ. Յուսուֆի կողմից, որից հետո խութեցիք ապստամբեցին Բագարատի որդիներ Դավթի ու Աշոտի և եղբոր՝ Թոռնիկի որդի Հովնանի (یونان بن در نیق)[90] գլխավորությամբ ու սպանեցին Յուսուֆ ոստիկանին։ Հայոց իշխանի պարտականություններն ինքնաբերաբար անցան Բագարատի եղբայր Սմբատ սպարապետին, որը Ասողիկի մոտ հիշվում է անմիջապես Աշոտ Մսակերից հետո[91]։ Սմբատ Ապլաբասի՝ 855 թ. Բուղայի կողմից Սամառա գերի տարվելուց հետո նրան փոխարինեց որդին՝ Աշոտը, որը 862-ին նշանակվեց իշխանաց իշխան[92]։ Աշոտ Բագրատունին դարձավ արաբական շրջանի վերջին Հայոց իշխանը և Բագրատունյաց թագավորության առաջին թագակիրը։

Արաբական առաջին արշավանքից (640) մինչև Բագրատունյաց թագավորության սկիզբը ընկած ժամանակաշրջանում Հայոց իշխանների ցուցակը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Թեոդորոս Ռշտունի	639—654
Համազասպ Մամիկոնյան	654—661
Գրիգոր Մամիկոնյան	661—685
Աշոտ Բագրատունի	685—689
Ներսեհ Կամսարական	689—693
Սմբատ Բագրատունի	693—726
Աշոտ Բագրատունի	732—748
Մուշեղ Մամիկոնյան	748—753
Սահակ Բագրատունի	753—770
(Սմբատ Բագրատունի	753—775)[93]
Աշոտ Բագրատունի	775—781
Տաճատ Անձևացի	781—785
Աշոտ Մսակեր Բագրատունի	790 (մոտավ.)—826
Բագարատ Բագրատունի (իշխանաց իշխան)	826—851
(Սմբատ Ապլաբաս Բագրատունի	826—855)[94]
Աշոտ Բագրատունի	855 (սպարապետ)
	862 (իշխանաց իշխան)

---

88 Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Ա, էջ 122—127։

89 Թովմա, էջ 206։

90 Jaqubi, II, 598. J. Markwart, Südarmenien und die Tigrissquellen, Wien, 1930, էջ 298 (1)։ Թովմա, էջ 119—120։

91 Ասողիկ, էջ 110։

92 Դրասխանակերտցի, էջ 74։

93—94 Փակագծում նշվածները սպարապետներ են, որոնք իրենց նախորդող Հայոց իշխանի մահվանից կամ հեռացումից հետո կառավարել են երկիրը։ Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում «իշխանաց իշխան» մնաց որպես հատուկ գործակալություն։

«Իշխան Հայոց» տիտղոսը, որ տրվում էր Հայաստանի իշխողներին բյուզանդա-պարսկական տիրապետության շրջանում (VI դ. վերջ և VII դ.), ամբողջ արաբական տիրապետության շրջանում ևս լայնորեն գործածվում էր թե հայերի ու արաբների, թե հարևան այլ ժողովուրդների կողմից։ Բյուզանդական մատենագրության մեջ տառացիորեն նույն արտահայտությունն է գործածված ὁ ἀρχων τῆς Ἀρμενιας[95], իսկ Թեոփանես պատմիչը VII դարի վերջին Հայոց իշխան Սմբատ Բագրատունուն անվանում է ὁ πατρικιος Ἀρμενιας[96] (Հայոց պատրիկ)։

Խալիֆայության ժամանակ Հայոց իշխանը արաբերեն կոչվում էր բաթրիկ կամ բիթրիկ (بطريق)[97], որը հունարեն պատրիկի աղավաղումն է։ Սույն անվանումը արաբները տալիս էին օրինակ Աղվանից իշխաններին՝ بطريق ال ان[98] «Աղվանքի իշխան»։ Բնականաբար Հայոց իշխանն էլ նույն ձևով պետք է կոչվեր بطريق الارمن «Հայոց իշխան», մանավանդ որ գոյություն ուներ صاحب الارمن «Հայոց Տեր» ձևը, իսկ հետագայում Հայոց թագավորները նույն ձևով կոչվում էին ملك الارمن[100] «Թագավոր Հայոց»։ Ասորական աղբյուրներում «Հայոց իշխանը» կոչվում էր պատրիկ։ Օրինակ, Աշոտ Մսակերը Միքայել Ասորու մոտ կոչվում է Aśūd bātriq[101]։

Հայաստանի գլխավոր քաղաքը և Արմինիայի ոստիկանի նստավայրը Դվինն էր, սակայն Հայոց իշխանները այնտեղ չէին նստում։ Ամբողջ VIII դարում[102] Հայոց իշխանները, որոնք հիմնականում Բագրատունիներ էին, որպես նստավայր ունեին Դարույնք ամրոցը Կոգովիտ գավառում։ Բագրատունիների տիրույթները մեծ չափով ընդարձակվելուց հետո Աշոտ Մսակերը հաստատվեց Բագարանում կամ, ինչպես Ասողիկն է գրում, Դարույնքից այնտեղ տեղափոխեց իր արքունիքը («Սա գանձագին արար զգաւառն Արշարունեաց յազգէն Կամսարականաց և զարքունիսն ի Կոգովտէ յԱրշարունիս փոխեաց»)[103]։ Հենց Բագարանումն էր, որ «Հայոց իշխան»-ներից վերջինը՝ Աշոտ Բագրատունին թագավոր օծվեց և այն դարձրեց Հայոց թագավորության մայրաքաղաքը[104]։

---

[95] Narratio, 341։ Սույն աշխատության վերջում գրված «Հայոց իշխան»-ների ցուցակում նրանք կոչվում են βασιλεις Ἀρμενιων «Հայոց թագավորներ», որի վրացական թարգմանությունը նույն իմաստն է տալիս მეფენი სომეხთანი։ Narratio. էջ 410։ Միքայել Ասորու ժամանակագրության վերջում գրված ցուցակում Հայոց իշխանները Աշոտ Մսակերից սկսած թագավոր են կոչվում։ Michel le Syrien, V. 516.

[96] Theophanis Chronographia, Bonnae, MDCCCXXXIX, էջ 561։

[97] Irfan Kawar, Bitrīk, Encyclopédie de l'Islam, nouv. ed., Leyde-Paris, I, 1287 - 1288.

[98] Jaqubi, II, 562.

[99] Minorsky, A History of Sharvan and Darband in the 10th—11th centuries, Cambridge, 1958 (arab.), էջ 3։

[100] Opus Geographicum auctore, Ibn Hauqal. ed. J. H. Kramers, Lugd. Bat., 1938, II, էջ 343։

[101] Michel le Syrien, IV, 496։ Իր ժամանակագրության վերջին մասում Միքայել Ասորին տալիս է Հայոց իշխանների մի ցուցակ, որի մեջ անունները հայերենից թարգմանված լինելով, տրված են ըստ կիլիկյան արտասանության և պատրիկն էլ գրված է badrig ձևով (Michel le Syrien, V, 516)։

[102] Հայոց իշխանը Դվինում չէր մնում նաև VII դարում։ Օրինակ, Գրիգոր Մամիկոնյանը նստում էր Արուճում, Աշոտ Բագրատունին՝ Դարույնքում և այլն։

[103] Ասողիկ, էջ 106։

[104] Դրասխանակերտցի, էջ 80։

Հայոց իշխանի նշանակումը որոշ սրարողությամբ էր կատարվում։ Արմինիայի ոստիկանը կամ Արմինիայի, Ատրպատականի և Ջազիրայի ընդհանուր ոստիկանը Դվին էր հրավիրում նախարարներին և հայտարարում, թե ում էր տրվելու Հայաստանի իշխանությունը, հանձնելով նրան որոշ ընծաներ (հավանաբար զգեստներ կամ նժույգներ)։ Օրինակ, Մուավիան Թեոդորոս Ռշտունուն տվեց «հանդերձս ոսկեղէնս և ոսկեթելս և վառ մի նորին աւրինակաւն»[105]։ Մրվան իբն Մուհամմադը Աշոտ Բագրատունուն տվեց «իշխանութիւն պատրկութեան... և բազում պատուով պատուէր գնա»[106]։ Իբն ալ-Ասիրի վկայությամբ Աղվանից իշխան Սահլ Սմբատյանը ստացել էր մեկ միլիոն դիրհեմ, ականակուռ գոտի և պատրկության թագ (تاج البطرقة)[107] իր ծառայությունների փոխարեն։ Հավանաբար «բաթրիկի» թագ ստանում էր նաև Հայոց իշխանը։

Հայոց իշխանն սկզբունքորեն ենթակա էր Արմինիայի ոստիկանին և այս երկուսի միջև հաճախ տարաձայնություններ էին ծագում։ Դրա լավագույն օրինակը Տաճատ Անձևացու և Օսման իբն Ումարայի միջև ծագած հակամարտությունն էր, որը ողբերգական վախճան ունեցավ Հայոց իշխանի համար։

Հայոց իշխանի գործակալությունը նախարարական Հայաստանի[108] ներքին կազմակերպության հիմնական օղակն էր։ Արաբները թեև անձեռնմխելի թողեցին ավատական Հայաստանի ներքին կառուցվածքը, սակայն մյուս կողմից սահմանափակեցին Հայոց իշխանի իրավունքները։ Եթե Հայոց իշխանին համեմատենք Հայոց մարզպանի հետ, կտեսնենք, որ վերջինս ավելի հեղինակություն վայելող անձնավորություն էր, բանի որ անմիջապես Արքայից արքային էր ենթարկվում։ Հայոց իշխանն անմիջականորեն ենթակա չէր խալիֆային և նրան դիմում էր միայն Արմինիայի ոստիկանի դեմ բողոքելու դեպքում։ Հայոց իշխաններից միայն Աշոտ Բագրատունին էր, որ անմիջական բանակցություններ վարեց Հիշամ խալիֆայի հետ։ Հայոց իշխանը երկրի կառավարիչն էր։ Նա էր կարգավորում երկրի բոլոր վարչական գործերը, թեև Արմինիայի ոստիկանը միջամտելու իրավունք ուներ։ Հայաստանի հարկերը հավաքելու գործին որոշակի մասնակցություն ուներ Հայոց իշխանը։ Նա պատասխանատու էր խալիֆայության առջև նախարարների ապստամբության կամ անհնազանդության համար։ Նա էր կարգավորում նախարարների կամ որևէ հայ նախարարի և արաբ ամիրայի միջև ծագած վեճերը։ Նա պարտավոր էր ապահովել հայկական այրուձիի մասնակցությունը խալիֆայության մղած կռիվներին և սպարապետի հետ միասին ներկա լինել կռվի դաշտում։

Հայոց իշխանին ենթակա էին Հայաստանի բոլոր նախարարները (նաև տեղական արաբ ամիրաները) և առաջին հերթին սպարապետը, ինչպես նաև կաթողիկոսը։ Երբեմն Հայոց իշխանը միաժամանակ լինում էր նաև սպարապետ։ Բացի դրանից, որոշ սպարապետներ (ինչպես Աշոտ Կույրի որդի Սմբատը և Աշոտ Մսակերի որդի Սմբատ Ապլարասը) Հայոց իշխանի բացակա-

105 Սեբեոս, 146։

106 Ղևոնդ, 112։

107 Ibn al-Athir, Կահիրե, Ե, 245։

108 Ն. Ադոնցը Հայոց պատմության այն շրջանը, որն սկսում է Արշակունյաց անկումից և վերջանում Բագրատունյաց թագավորության հիմնադրումով անվանում է «նախարարական շրջան»։ Տե՛ս Армения, Новый Энциклопедический Словарь, СПб., т. 3. С. Еремян. Опыт периодизации истории Армении эпохи феодализма. «Вопросы истории», 1951, № 7, էջ 55—57։

ության դեպքում կառավարել են երկիրը։ Կաթողիկոսի ընտրության հարցում Հայոց իշխանի խոսքը որոշակի նշանակություն ուներ, մանավանդ իշխանաց իշխան տիտղոսն ստանալուց հետո[109]։ Արաբների մոտ Հայոց կաթողիկոսը ասորի կաթողիկոսների նման կոչվում էր ջասլիկ (جاثليق)[110]։ Ըստ Ղազանից պատմության, Արդ ալ-Մալիք խալիֆան հետևյալ ձևով է դիմում Եղիա կաթողիկոսին. «Ջառնդ Աստուծոյ զԵղիայի Արմենեան ազգի ջաթղկիդ»[111]։ Այստեղ ջասլիկը հանդես է գալիս հայկականացած ջաթղիկ ձևով։

Հայոց իշխանը երկրի կառավարման գործում որոշակի դեր. ուներ շնորհիվ այն հանգամանքի, որ Արմինիայի արաբ ոստիկանները շատ հաճախ զբաղված էին լինում խազարների և Բյուզանդիայի դեմ մշտական պայքարով։ Որոշ անձնավորությունների մասին արաբական աղբյուրներից գիտենք, որ եղել են Արմինիայի ոստիկաններ, իսկ հայ պատմիչը, որը խոսում է նրանց ռազմական գործունեության մասին, չի նշում նույնիսկ թե եղել են կառավարիչ։ Օրինակ, Օմայանների օրոք Արմինիայի ոստիկան էր Սաիդ ալ-Հարաշին, որի մասին խոսում են Բալազորին[112] և Իբն ալ-Ասիրը, իսկ Ղևոնդը նրան պարզապես կոչում է «զօրավար»[113]։ Մի ուրիշը՝ Ջառահ իբն Արդ Ալլահ ալ-Հաքամին եղել է Արմինիայի ու Ատրպատականի կառավարիչ, բայց Ղևոնդի մոտ հիշվում է սոսկ որպես «Ջառայ ոմն... զօրավար»[114]։ Հայ պատմիչի կողմից «ոմն» համարված նման բազմաթիվ դեմքեր իշխել են Արմինիայում, սակայն զբաղված լինելով ռազմական գործունեությամբ, Հայաստանի, ինչպես նաև Ադվանքի ու Վիրքի ներքին վարչական կյանքին գործոն մասնակցություն չեն ունեցել։ Ծայրահեղ դեպքում նրանց հետաքրքրել է նախարարների հնազանդության ապահովումը և հարկերի ժամանակին հավաքումն ու առաքումը[115]։

Արմինիա ոստիկանության մեջ Հայոց, Ադվանից և Վրաց[116] «իշխան»-ների գոյությունը բացառիկ երևույթ էր ամբողջ խալիֆայության համար։ Հայ ժողովրդի կատաղի գիմադրությունը թույլ չտվեց, որ արաբ կամ այլ նվաճող տարրերը տիրապետող դիրք ձեռք բերեն Արմինիայի երկրներից որևէ մեկի ներսում (բացի, որոշ չափով, Ադվանքից)։

Հայաստանը արաբական շրջանում երբեք չկորցրեց իր ներքին ինքնավարությունը և վարչական տեսակետից երբեք չկազմալուծվեց, այլ լինելով հանդերձ խալիֆայության «Արմինիա» նահանգի մի մասը, պահպանեց իր ուրույն վարչական ու քաղաքական դեմքը։ Հայաստանն այս շրջանում կառավարում էր Հայոց իշխանը, որը թեև ենթակա էր Արմինիայի ոստիկանին, սակայն երկրում գործերի իրական տնօրինողն էր։

---

109 Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, 926։ Դրասխանակերտցի, էջ 65։

110 Ph. Hitty, History of the Arabs, London, 1958, էջ 355։

111 «Պատմութիւն Ագուանից», էջ 237։ History of the Caucasian Albanians by Movsês Dasxurançi, tr. by C. J. F. Dowsett, London, 1961, էջ 192 (n. 1)։

112 Beladsori, էջ 207։ Ibn al-Athir, V, էջ 74։

113 Ղևոնդ, էջ 102։

114 Ibn al-Athir, V, էջ 52։ E. de Zambaur, Manuel de généalogie et de chronologie pour l'histoire de l'Islam, Hannover, 1927, էջ 177—178։ Ղևոնդ, էջ 102։

115 M. Ghazarian, նշվ. աշխ., էջ 56—57։

116 Ժ. Լորանը գտնում է, որ Հայոց իշխանին ենթակա երկրներ էին նաև Ադվանքն ու Վիրքը։ L'Arménie entre Byzance et l'Islam, էջ 80—81։

«ИШХАН АРМЕНИИ» В ЭПОХУ АРАБСКОГО ВЛАДЫЧЕСТВА

А. Н. ТЕР-ГЕВОНДЯН

(Резюме)

При халифате Арменией управляли правители, которые носили титул «ишхан (князь, властитель, арабск. بطريق) Армении» и подчинялись арабским «остиканам» (правителям) Арминии. Кроме Арминии, ни в одной другой христианской провинции халифата местные феодалы не назначались на подобные высокие должности. Кроме ишхана, в Армении существовала еще должность спарапета — главнокомандующего войск Армении. Начиная с конца VII в., Багратиды почти наследственно занимали должность ишхана Армении, имея резиденцией крепость Даруйнк, а с начала IX в.— Багаран.

При первых Аббасидах ишханы Армении находились в неблагоприятных условиях. Однако в первой половине IX в. во всей Армении усилилось влияние Багратидов, которые уже носили титул «ишханац ишхан» (князь князей).

Исследование первоисточников позволяет установить следующий список ишханов Армении:

Теодорос Рштуни	638/639—654
hАамазасп Мамиконеан	654—661
Григор Мамиконеан	661—685
Ашот Багратуни	685—689
Нерсеh Камсаракан	689—693
Смбат Багратуни	693—726
Ашот Багратуни	732—748
Мушեł Мамиконеан	748—753
Саhак Багратуни	753—770
(Смбат Багратуни)*	до 775
Ашот Багратуни	775—781
Тачат Андзеваци	781—785
Ашот Мсакер Багратуни	790 (прибл.)—826
Багарат Багратуни (ишханац ишхан)	826—851
(Смбат Багратуни)*	до 855
Ашот Багратуни	855 (в 884 г. стал царем)

* В скобках указаны спарапеты, которые после смерти предыдущих ишханов управляли страной.